

Վարդապատէն ԵՏԲ Երպորոդ Կրոպի

13 ՅՈՒԼԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Կատարեալ Նդէ՛ք (Բ)	Էջ 2
Պարզեւ	Էջ 4
Յիսուսի Փորձութիւնը	Էջ 4
Ժամանակացոյց եւ Մանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(5.1-10)

Լսեցէ՛ք սիրոյ երգը, որ ձեզի պիտի երգեմ ի դիմաց սիրականին, որ կ'երգէ իր սիրելի այգիին: «Ես, սիրականս, այգի մը առի բարեբեր բլուրի մը վրայ. ցանկով պատեցի, ձողերով պատ քաշեցի անոր շուրջը, եւ ընտիր խաղողի որթատունկ տնկեցի: Այգիին կեդրոնը աշտարակ մը կանգնեցի եւ հնձան մըն ալ փորեցի, եւ ապա սպասեցի որ ընտիր խաղող տայ, բայց միայն ազոխ տուաւ: Արդ, ով բնակիչներ Յուդայի եւ Երուսաղէմի, դո՛ւք դատեցէ՛ք իմ այգիիս խնդիրը: Ուրիշ ի՞նչ պէտք է ընէի այգիիս համար եւ չըրի, եւ ահա խաղողի փոխարէն ազոխ տուաւ ինձի: Հիմա ես ձեզի ըսեմ թէ ի՛նչ պիտի ընեմ այգիիս.– պիտի քակեմ ցանկապատը, որպէսզի գազաններուն ճարակ դառնայ, պիտի փլցնեմ պատերը, որպէսզի ոտքի կոխան ըլլայ: Խոպան պիտի ձգեմ. ո՛չ պիտի յօտեմ եւ ոչ ալ բրեմ. պիտի թողում որ փուշ ու տատասկ բուսցնէ, եւ ամպերուս պատուէր պիտի տամ որ չանձրեւեն այգիիս վրայ»:

Վա՛յ անոնց որոնք իրարու ետեւէ տուն կը գնեն, նոր կալուածներ կը բարդեն իրենց ունեցածներուն վրայ, ընկերոջ բան չձգելու համար:

Երկնաւոր Զօրքերու Տիրոջ այգին Իսրայէլի տունն է, իսկ անոր սիրած նոր որթատունկը՝ Յուդայի բնակիչները: Անոնցմէ իրաւունք ակնկալեց, բայց անիրաւութիւն գտաւ. արդարութիւն կամեցաւ, բայց ազազակող անարդարութիւն տեսաւ: Վա՛յ անոնց որոնք իրարու ետեւէ տուն կը գնեն, նոր կալուածներ կը բարդեն իրենց ունեցածներուն վրայ, ընկերոջ բան չձգելու համար:

Միթէ առանձի՞ն պիտի ապրիք աշխարհի վրայ: Այս բոլորին տեղեակ է Երկնաւոր Զօրքերու Տէրը որ այսպէս կ'ըսէ ձեզի. «Բոլոր այս մեծ ու գեղեցիկ տունները աւեր եւ անմարդաբնակ պիտի մնան, եւ

ձեր հողերը արդիւնք պիտի չտան. տասը արտավար այգիէն հազիւ կարաս մը գինի պիտի ստանաք, տասը պարկ սերմանողը հազիւ մէկ պարկ պիտի ժողվէ»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ
ՆԱՄԱԿԷՆ
(6.18-7.11)

Ձէ՞ք գիտեր, թէ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Քրիստոսի անդամները առնենք պոռնիկի անդամ դարձնենք: Բնա՛ւ երբեք: Ձէ՞ որ գիտէք թէ պոռնիկին միացողը անոր հետ մէկ մարմին կը կազմէ, որովհետեւ գրուած է. «Երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»: Նոյնպէս ալ, ով որ Տիրոջ միանայ՝ անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ: Հետեւաբար պոռնիկութենէ հեռո՛ւ փախէք: Բոլոր միւս մեղքերը որ մարդ կը գործէ, իր մարմնին հետ կապ չունին. բայց պոռնիկութիւն ընողը իր մարմնին դէմ կը մեղանչէ: Ձէ՞ք գիտեր, որ ձեր մարմինները տաճարն են Ս. Հոգիին որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի: Գիտցէք, որ դուք չէ՛ք ձեր անձերուն տէրը, այլ Աստուած, որ փրկագիւտով ձեզ գնեց: Հետեւաբար այնպէ՛ս ապրեցէ՛ք, որ Աստուած փառաւորուի ձեր մամիններով:

Ձէ՞ք գիտեր, որ ձեր մարմինները տաճարն են Ս. Հոգիին որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի:

Ձեր նամակին մէջ ինձի գրած էիք նաեւ այն մասին՝ թէ մարդ լաւ կ'ընէ եթէ բնաւ չամուսնանայ: Բայց որպէսզի պոռնիկութեան մէջ չիյնաք՝ ամէն մարդ իր կինը թող ունենայ եւ ամէն կին՝ իր ամուսինը, որպէսզի կնոջ պէտքերը այրը գոհացնէ, եւ ամուսնոյն պէտքերը՝ կինը: Որովհետեւ կինը իր մարմնին տէրը չէ՛, այլ՝ ամուսինը. ո՛չ ալ այրը իր մարմնին տէրն է, այլ՝ կինը: Երկար ատեն հեռու մի՛ մնաք իրարմէ: Եթէ կ'ուզէք աղօթքի նուիրուիլ, կրնաք փոխադարձ համաձայնութեամբ ժամանակ մը իրարմէ հեռու մնալ. բայց յետոյ վերադարձէ՛ք ձեր կենսակցութեան, որպէսզի չըլլա՛յ որ Սատանան ձեզ փորձութեան մղէ՝ ձեր անժուժկալութենէն օգտուելով: Հրահանգ մը չէ՛ այս տուածս, այլ պարզապէս՝ ներողամիտ կեցուածք: Որովհետեւ ես պիտի ուզէի որ ամէն մարդ ալ ինձի

Ի Ե

պէս ապրէր, բայց Աստուած իւրաքանչիւրին իրեն
յատուկ շնորհք մը տուած է. մէկուն՝ այսպէս ապրելու
շնորհք, միւսին՝ այնպէս: Սակայն ամուրիներուն եւ

...նախընտրելի
է ամուսնանալ
քան թէ
ցանկութեամբ
եռալ:

այրիներուն կ'ըսեմ.- Աւելի լաւ
կ'ընեն՝ եթէ ինծի պէս մնան.
բայց եթէ չեն կրնար տոկալ՝
թող ամուսնանան, որովհետեւ
նախընտրելի է ամուսնանալ
քան թէ ցանկութեամբ եռալ:
Իսկ ամուսնացած զոյգերուն
հետեւեալ պատուէրը կու տամ

Տիրոջ կողմէ.- Ոեւէ կին իր ամուսինէն թող չբաժնուի՝.
Իսկ եթէ բաժնուի, կա՛մ առանց ամուսնութեան թող
ապրի եւ կա՛մ դարձեալ հաշտուի իր ամուսինին հետ:
Նոյնպէս, ոեւէ այր իր կինը թող չձգէ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ
(19.3-12)

Փարիսեցիներ Յիսուսը փորձելու մտադրութեամբ
մօտեցան անոր եւ հարցուցին. «Իրաւունք ունի՞
մէկը ոեւէ պատճառով իր կինը արձակելու»: Յիսուս
անոնց պատասխանեց. «Ձէ՞ք կարգացած Սուրբ
Գիրքերուն մէջ, թէ Աստուած սկիզբէն արու եւ էք
ստեղծեց մարդիկը եւ ըսաւ անոնց. “Այս պատճառով
այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ

...ոեւէ մէկը
թող չբաժնէ
անոնք որ
Աստուած
միացուց:

միանայ, եւ երկուքը մէկ մարմին
պիտի ըլլան”: Հետեւաբար այլեւս
երկու չեն, այլ մէկ մարմին:
Ուրեմն ոեւէ մէկը թող չբաժնէ
անոնք որ Աստուած միացուց»:

Փարիսեցիները դարձեալ
հարցուցին. «Հապա ինչո՞ւ Մովսէս
օրէնք սահմանեց՝ բաժանման

թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»: Յիսուս
պատասխանեց. «Մովսէս ձեր խտտարտութեան
պատճառով արտօնեց արձակել ձեր կիները, սակայն
ստեղծագործութեան ժամանակ արձակելու խօսք
չկար: Գիտցէք նաեւ թէ ով որ իր կինը կ'արձակէ
առանց պոռնկութեան պատճառի եւ ուրիշ մը
կ'առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

Աշակերտները ըսին Յիսուսի. «Եթէ ամուսնութիւնը
այդպէս դատապարտութեան պատճառ կրնայ ըլլալ
այր մարդուն եւ կնոջ համար, աւելի լաւ է չամուս-
նանալ»: Յիսուս ըսաւ. «Բայց ամէն մարդ չի կրնար
առանց ամուսնութեան մնալ, այլ միայն անոնք,
որոնց Աստուած կարողութիւն տուած է: Որովհետեւ
մարդիկ չեն ամուսնանար այն պարագաներուն, երբ
ծնունդով ներքինի են, կամ մարդոց կողմէ ներքինի
եղած են եւ կամ զիրենք ներքինի դարձուցած են
Աստուծոյ արքայութեան համար: Ով որ կրնայ
ընդունիլ իմ հաստատումս, թող կատարէ զայն»:

Անցեալ անգամ գրած էի, թէ Յիսուս երկու
առիթներով «կատարեալ ըլլալ»ու խօսք ըրած է:
Մատթէոսի աւետարանը երկուքն ալ ունի. առաջինը
Լերան Քարոզի «Թշնամիները Սիրել» անուանուած
բաժնին եզրափակիչ պատգամն է (Մտ 5.48),
իսկ երկրորդը մեծահարուստ երիտասարդին հետ
խօսակցութեան մէջ արտայայտուած է (Մտ 19.21):
Նաեւ ըսած էի, որ թէեւ Մատթէոսի կողմէ շատ
չարծարծուած, սակայն հաւանական է, որ հիմնական
կարեւորութիւն մը կը ներկայացնէր անիկա իրեն
համար: Եւ աւետարանիչին «կատարեալ ըլլալ»ու
հասկացողութեան արմատը ցոյց տուած Ս. Գրային
աւանդութեան մէջ:

Նկարագրած էի Նոյ Նահապետի տիպարը,
որովհետեւ ան Հին Կտակարանին մէջ առաջին անձն
է, որ կատարեալ որակուած է:

Հիմա պիտի նկարագրեմ Աբրահամ Նահապետ
«կատարեալ» մարդուն տիպարը:

Թէեւ անոր անձին համար «կատարեալ» մակդիրը
չէ տրուած ուղղակիօրէն, սակայն այլապէս
թելադրուած է: Պօղոս առաքեալ

Որդին...
յաւիտեանապէս
կատարեալ է:

Գաղատացիներու գրած իր
նամակին մէջ այսպէս ըսած է.
«Քրիստոսի միանալով՝ բոլորդ ալ
մէկ եղաք: Արդ, եթէ Քրիստոսի
կը պատկանիք՝ կը նշանակէ թէ
դուք Աբրահամի զաւակներ էք եւ այլն» (Գղ 3.28-29):
Քրիստոս կատարելութիւնն է, ինչպէս Եբրայեցիներու
Նամակին հեղինակը գրած է. «Որդին...յաւիտեանապէս
կատարեալ է» (Եբր 7.28): Եւ քանի որ Քրիստոսի
պատկանիլը Աբրահամի զաւակ ըլլալ կը նշանակէ,
ուրեմն՝ Աբրահամ Նահապետն ալ Աստուծոյ կողմէ
«կատարեալ» համարուածներու շարքին մէջն էր, կամ
«հայր»ն էր անոնց որ Քրիստոս-կատարելութեան
ճանապարհէն կը քայլեն:

Ուստի, հիմա պիտի ցանկագրեմ Աբրահամ
Նահապետ զէմքին Աստուծոյ հետ փոխյարա-
բերութեան կարեւոր դիժերը:

Առաջին. Աստուած յանկարծ կը սկսի խօսիլ
Աբրահամի հետ, երբ տակաւին ան Աբրամ կը
կոչուէր: Աստուած ինչո՞ւ կ'ընտրէ Աբրամը եւ անոր
հետ կը խօսի: Պատմութիւնը բան մը չ'ըսեր: Նոյի
պարագային սկիզբէն գրուած էր. «Նոյ իր դարուն
մարդոցը մէջ արդար ու կատարեալ մարդ մըն էր»
(Ծն 6.9): Ուրեմն, Աստուծոյ կողմէ անոր ընտրութեան
պատճառը առաջուց յայտնուած է: Մինչդեռ Աբրամի
պարագային ընտրութիւնը անակնկալ է: Անշուշտ
Աբրամի ընթացքը ցոյց պիտի տար, թէ ան Աստուծոյ
կամքին հնազանդ էր:

Երկրորդ. Աստուած պատուէր կու տայ՝ եւ Աբրամ

կը հնազանդի: Անոր հնազանդութիւնը կարելի է արմատական բնորոշել: Աստուած անոր կը պատուիրէ իր երկրէն, ազգականներէն եւ հօր տունէն ելլել ու երթալ այն երկիրը, որ ցոյց պիտի տայ (Ծն 12.1): Այն ժամանակներուն՝

Աստուծոյ ընտրած մարդը արմատական հնազանդութեան մէջ կ'ըլլայ: Որ կը նշանակէ, թէ ան արմատական վստահութեան մէջ կ'ըլլայ:

երբ մարդիկ գերդաստանային կեանք կ'ապրէին եւ ընկերային կեանքի իտէպլ ձեւը անիկա էր, նման պատուէր շատ ծանր էր լսել ու գործադրել: Եւ Աբրամ առանց առարկութեան Աստուծոյ ըսածը կ'ընէ: Անոր հնազանդութեան արմատականութիւնը աւելի յստակ կը դառնայ, երբ տարիքն ալ նկատի առնուի: Ըստ դրուագին, Աբրամ

եթեմանասունհինգ տարեկան էր, երբ իր շրջանակէն դուրս ելաւ (Ծն 12.4): Աստուծոյ ընտրած մարդը արմատական հնազանդութեան մէջ կ'ըլլայ: Որ կը նշանակէ, թէ ան արմատական վստահութեան մէջ կ'ըլլայ:

Երրորդ. Աստուած զայն խոստումով կ'առաջնորդէ (Ծն 12.2-3, 7: 15.1, 4-5, 7, 18: 17.2, 4-8: 18.10, 14: 22.16-18): Խոստումը «յաւիտենական ժառանգութիւն» երկիրի եւ սերունդի մը ու «մեծ ազգ»ի մը կը վերաբերի: Կատարեալ մարդը աստուածային խոստում ունի: Անոր կը հաւատայ եւ կը յուսայ: Եւ խոստումին երկնային եւ տեւական վերլիչեցումով կ'ապրի ան (Ծն 12.2: 15.1, 4-5, 7, 18-21: 17.1-2, 4-8, 15-19):

Չորրորդ. Աստուած «կ'երեւնայ» Աբրամի (Ծն 12.7), անոր քովը կու գայ (Ծն 17.22), անոր առջեւ կը կենայ (Ծն 18.22):

Հինգերորդ. Աբրամ կը պաշտէ Տէրը (Ծն 12.7: Հմմտ Ծն 22.14):

Վեցերորդ. Աստուած միշտ «վահան»ն է իր ծառային (Ծն 15.1):

Եօթներորդ. Աբրամի Աստուած պատահելիք իրականութիւններ կը յայտնէ (օրինակ՝ Ծն 15.13-14-ը, որ կանխաստութիւն է եբրայեցի ժողովուրդին Եգիպտոսի մէջ գերութեան եւ ազատագրութեան):

Ութերորդ. Աստուած ուխտ կը կնքէ Աբրամի հետ: Եւ ուխտին նշանը թլփատութիւնը կ'ըլլայ: Ուշագրաւ է, որ կատարեալ ըլլալու խօսքը Աբրահամի պարագային արձանագրուած է ուխտին առնչաբար:

Կատարեալ ըլլալու նամբան ուխտի նամբան է:

Այսինքն՝ Աստուած Աբրահամի հետ ուխտը կնքելէ առաջ անոր կ'ըսէ. «Իմ առջեւ քալէ՛ ու կատարեալ եղիր» (Ծն 17.1): Եւ կարծէք զայն «կատարեալ» ըլլալու ճամբուն մէջ դրած ըլլալու խորհրդանշական արարք՝ «Աբրամ» անունը կը փոխէ «Աբրահամ»ի (Աբրամ «Հայր բարձր» թարգմանուած է, իսկ «Աբրահամ»՝ «Հայր բազմութեան»): Կատարեալ ըլլալու ճամբան ուխտի ճամբան է: Աբրահամի պարագային Աստուծոյ դրած ուխտին նշանը թլփատութիւնը կ'ըլլայ: Բայց ինչպէ՞ս է, որ թլփատութիւնը նշան կ'ըլլայ

ուխտին կամ ուխտի ճամբուն: Բ. Օրէնքի Գիրքին մէջ հետեւեալ պատուէրը կայ. «ձեր սրտերուն անթլփատութիւնը թլփատեցէք ու ձեր պարանոցները ալ մի՛ խստացնէք» (Բ. Օր 10.16): Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Կանխած համարները կը լուսաբանեն, թէ «սրտի թլփատութիւն» ըսել է. 1.- Աստուծոյ երկնային, 2.- Անոր ճամբաներուն մէջ քալել, 3.- Զինք սիրել, 4.- Ամբողջ սրտով եւ ամբողջ հոգիով գ'Աստուած պաշտել, 5.- Տիրոջ պատուիրանները եւ կանոնները պահել: Արդ, Աբրահամի կատարեալ ըլլալու ճանապարհն էր՝ Աստուծոյ երկնային, անոր ճամբաներուն մէջ քալելը, գ'Այն սիրելը, ամբողջ սրտով եւ ամբողջ հոգիով գ'Այն պաշտելը: Բ. Օրէնքի Գիրքէն քաղուած 5-րդ կէտը Նահապետին պարագային կարելի է հասկնալ՝ անոր կողմէ պահպանուած արդարութեան եւ իրաւունքի կեանքի (տե՛ս Ծն 18.19-ը):

Իններորդ. Աբրահամ անկարելիին հաւատացող էր: Հակառակ իր եւ կնոջ տարիքներուն յառաջացած ըլլալուն՝ հաւատաց զաւակ պարգեւելու Աստուծոյ խոստումին, եւ իր հաւատքը իրականացաւ (Ծն 21.2): Ասիկա կը թելադրէ նաեւ՝ որ աստուածաշնչական կատարելութիւնը անտրամաբանելի է:

Տասերորդ. Աբրահամ «Տիրոջ ճամբան» պահելու պատգամատու է (Ծն 18.19):

Կատարեալ մարդը ո՛չ թէ միայն կ'ապրի Տիրոջ ճամբուն մէջ, այլեւ այդ ճամբուն մէջ քալել կը պատգամէ: Որովհետեւ անոր փորձառութիւնը անձնական ճամբարութիւն մը չէ միայն, այլեւ ընդհանրական:

Կատարեալ մարդը ո՛չ թէ միայն կ'ապրի Տիրոջ ճամբուն մէջ, այլեւ այդ ճամբուն մէջ քալել կը պատգամէ:

Տասմեկերորդ. Մարդուն կորսուելը գինք կը խոռովէ: Սողոմ Գոմորի կործանումէն առաջ իր չքմեղանքը կարգալ (Ծն 18.16-33): Որքան Աստուծոյ յարած է, նոյնքան ալ արդար մարդով մտահոգ հոգի է կատարեալ անձնաւորութիւնը:

Տասներկրորդ. Աբրահամի պատմութեան ամենէն ցնցիչ տարրը իր գաւազին Իսահակի առ Աստուած գոհագործական ընծայման դրուագն է (Ծն 22.1-18): Շատ ծանօթ է անիկա: Աստուծոյ կամքին առջեւ Աբրահամի հնազանդութիւնը արմատական կոչեցի: Այս դրուագը անբաւարար կը դարձնէ «արմատական» բնորոշումը, որովհետեւ անոր հնազանդութիւնը կը յայտնուի առաւել խոր քան արմատականը, ահաւոր կերպով անկարելի հնազանդութիւն մը:

Տասերեքերորդ. Տէր ամէն բանի մէջ կ'օրհնէ Աբրահամը (Ծն 24.1): Կատարեալ մարդը թէ՛ իր օրերուն եւ թէ՛ յաւիտենական ժառանգութեան մէջ օրհնեալ է:

Կատարելութեան ճամբուն մէջ քալողը Աստուծոյ ճայնին ականջ կը դնէ Աբրահամ Նահապետի պէս: Եւ Աստուած գինք կատարեալ կը համարէ:

Հովիտ ԳԸ

ՊԱՐԳԵԻ

«Ես յաղթեցի աշխարհին»²:

Յաղթանակի խաչմերուկին կանգնած,
Արժէս դրած նժարին,
Հարց տուի Քեզի, Տէ՛ր.

Կամֆդ
Բառահիւս ոստայնիս՝
Վրէպէ վրէպ
Յաւերժական դեգերո՞ւմս է,
Թէ՛ նշմարիտ Բանին մէջ ինքնանանաչումս:

Կամֆդ
Խաւարիս բանտին մէջ
Խոցէ խոց
հնարագէտ փախո՞ւստս է,
Թէ՛ նմարիտ Լոյսին մէջ սփոփիչ բուժումս:

Կամֆդ
Ես-իս անկումին մէջ
Թակարդէ թակարդ
Ոստոստուն հե՞ւսն է,
Թէ՛ նշմարիտ Յաղթանակիդ
Հանապազօրեայ հանդիպումս:

Ու ես տեսայ, Տէր.
Գեղեցկութեան հրաշակերտ բուրգս անտեսելով,
Բարութեան երկիւղած նոխազիս առջեւ
Կանգ առիք:

Կեանքի խաղին մէջ, ըսիր,
Մի՛ մերժեք բեզի երկարած ձեռքս:
Յաւիտեանական սէրս³
Յաղթանակի մեծագոյն պարգեւս է:
Վերէն ծնունդովդ⁴
Յաւերդ բերկրանք պիտի դառնան:
Ու հաւատքդ⁵ պահած որպէս կռուան՝
Գառնուկիս արեան⁶ յաղթանակը պիտի ապրիս:


Ու ես «այո՞՞՞ Տէր» գոչեցի:
Շաւիղիդ մէջ՝ գգօս լինելութեան,
Թող մահաբոյր պատրանքս ցնդի:
Թող բառս երգէ փրկութեան աւետիսդ
Ու դառնայ վկայութեան⁶ խորան:
Թող խաւարս ըլլայ յուշարարը լոյսիդ
Ու վերքս՝ յղումը բուժարար ձեռքիդ:
Թող խոնարհ պարտութեամբս
Կանաչ յաղթանակդ ծլի:

Ողորմութեանդ մուրացիկ՝
Բայց շնորհիքով միշտ հարուստ,
Յաղթանակիդ հաւատարիմ զինուորն եմ ես:

Փա՛նք Քեզ Տէր:
Փա՛նք Քեզ:

ՍԻՐԵՐԱԿԱ

1-Ա Կր 16.57
2-ՅՏ 16.33
3-ՀԼ 8.37
4-Ա ՅՏ 5.4
5-ՅՏ 5.5, Ա ՅՏ 5.4
6-ՅԽ 12.11



ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

ՅԻՍՈՒՄ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ:

«Յետոյ Յիսուս Ս. Հոգիին կողմէ տարուեցաւ անապատ՝ Սատանայէն փորձուելու համար: Քառասուն օր եւ քառասուն գիշեր ծոմապահութեամբ անցնելէ ետք՝ անօթեցաւ» (Մտ 4.1-2):

«Յետոյ»։ Ե՞րբ է ասիկա։ Մարկոս աւետարանիչ կը լուսաբանէ. «Մկրտուելէն անմիջապէս ետք» (Մկ 1.12): Ինչո՞ւ կ'ըսէ Յիսուս Ս. Հոգիին կողմէ տարուեցաւ, փոխանակ ըսելու՝ թէ՛ Յիսուս ինք անապատ գնաց։ Բառացիօրէն առնելու պարագային, Ս. Հոգին կը դառնայ տանողը, իսկ Յիսուս կը դառնայ ենթարկուող անձ մը։ Սակայն իրականութիւնը այդպէս չէ։ Յիսուսի ամբողջ գործունէութեան ընթացքին թէ՛ Հայրն Աստուած եւ թէ՛ Ս. Հոգին Աստուած ներկայ են եւ կը գործեն։ Յիսուս երկրի վրայ Ս. Երրորդութեան միւս դէմքերուն ենթակայ կամ անոնց ստորադաս դէմք չէր։ Արդէն Ս. Երրորդութեան մէջ գերակայութիւն կամ ստորակայութիւն երբեք չկայ։

«Տարուեցաւ»։ Կրաւորական այս արտայայտութիւնը դիտումնաւոր կերպով գրուած է։ Աւետարանիչները աւելորդ բան

չեն գրած, այլ գրած են ամենէն անհրաժեշտ եւ կարեւոր տարրերը միայն: Արդ, երբ Մատթէոս աւետարանիչ «տարուեցաւ» գրած է՝ նպատակ մը ունի, բան մը կ'ուզէ ըսել: Ի՞նչ է նպատակը կամ ի՞նչ է ըսել ուզածը:

«Քաւուլթեան նոխագ» բացատրութիւնը ծանօթ է: Անիկա կու գայ Աստուածաշունչէն: Ղեկտացիներու Գիրքին մէջ զոհագործական կանոններու լայն ցանկ մը կայ: Այդ կանոններէն մէկը կը վերաբերի մեղքերու քաւուլթեան համար երկու նոխագներու մատուցման: Նոխագը արու այծն է, գիտէք: Մէկ նոխագը իբր մեղքի պատարագ կը գեներուէր Տիրոջ համար, իսկ միւսը կ'արձակուէր անապատի մէջ:

Ամէն տարի թշրին ամսուն, այսինքն՝ եբրայական 7-րդ ամսուն 10-րդ օրը նոխագ մը անապատին մէջ կ'արձակէին: Ղեկտացիներու Գիրքի 16-րդ գլխուն մէջ Ահարոնի համար հետեւեալ պատուէրը տրուած է. «Երկու նոխագ պիտի առնէ ու Տիրոջ առջեւ՝ Վկայութեան Խորանին դուռը կեցնէ: Ահարոն այդ երկու նոխագներուն վրայ վիճակ թող ձգէ. մէկ վիճակը Տիրոջ համար ու միւս վիճակը՝ ազատ արձակուելիք նոխագին համար: Ահարոն թող մօտեցնէ այն նոխագը, որուն վրայ Տիրոջ վիճակը ելաւ ու մեղքի պատարագ ընէ զանիկա: Այն նոխագը, որուն վրայ ազատ արձակուելու վիճակը ելաւ, Տիրոջ առջեւ ողջ թող կեցնէ՝ որպէսզի անով քաւուլթիւն ընէ ու ազատ արձակուելու համար դէպի անապատ ղրկէ: ...Եւ սրբարանին ու Վկայութեան Խորանին

...մարդ անհատը ինք իր մեղքը չի կրնար քաւել կամ քօթափել, եթէ Աստուած գայն առնելով չհեռացնէ անկէ:

եւ սեղանին համար քաւուլթիւն ընելը լմնցնելէ ետքը, ողջ նոխագը պէտք է մօտեցնէ: Եւ Ահարոն իր երկու ձեռքերը ողջ նոխագին գլխուն վրայ թող դնէ ու Իսրայէլի որդիներուն բոլոր անօրէնութիւնները եւ անոնց բոլոր յանցանքները եւ բոլոր մեղքերը թող խոստովանի անոր վրայ եւ զանոնք նոխագին գլխուն վրայ դնելով՝ յարմար մարդու մը ձեռքով անապատ ղրկէ: Նոխագը անոնց բոլոր անօրէնութիւնները իր վրայ առած՝ անբնակ երկիր մը թող տարուի եւ մարդը անապատին մէջ թող արձակէ նոխագը» (ՂԼ 16.7-10, 2022):

Աստուծոյ կողմէ անցեալին այս պատուիրուածը նախատիպային իմաստ

ունէր: Հարկաւ Աստուած ինք գիտէր, որ մեղքերը կենդանիին չենք կրնար փոխանցել, եւ ոչ ալ կենդանիին երբ անապատ կ'արձակուի՝ անօրէնութիւնները, յանցանքները եւ մեղքերը իրեն հետ կը տանի: Բայց այդ արարքով Աստուած կ'ուզէր ըսել, թէ մարդ անհատը ինք իր մեղքը չի կրնար քաւել կամ թօթափել, եթէ Աստուած զայն առնելով չհեռացնէ անկէ: Քաւուլթեան նոխագին օրինակը՝ այս բացատրութիւնը տալու եղանակ մըն էր: Հետեւաբար բուն նշանակութիւնն էր, թէ Աստուած է միայն մեր անօրէնութիւններուն, յանցանքներուն եւ մեղքերուն քաւիչը:

Յիսուսի մկրտութեան առիթով ըսի, որ անիկա իր կողմէ փոխանորդական արարք էր. Յիսուս ինքզինք կը նոյնացնէր ամբողջ մարդկութեան հետ, որպէսզի անոնց մեղքերը սրբէր մկրտութեան ջուրով: Ծիշդ նոյն գաղափարով՝ ան Քաւուլթեան նոխագին պէս կ'ըլլար եւ իր վրայ կ'առնէր համայն մարդկութեան մեղքերը: Եւ մինչ Հին Կտակարանին մէջ անապատ տանողը մարդ մըն էր, յետ մկրտութեան՝ Յիսուսը անապատ տանողը Աստուծոյ Հոգին պիտի ըլլար, այսինքն՝ իր համագոյակիցը: Ուստի. «տարուեցաւ»ը Քաւուլթեան նոխագը կը յիշեցնէ եւ կը թելադրէ, որ Յիսուս ինքզինք նոյնացուց անոր հետ, որպէսզի մարդկութեան մեղքերը քաւէ:

«Սատանայէն փորձուելու համար», կ'ըսէ: Ինչո՞ւ համար Յիսուս պէտք է փորձուէր: Ինչպէս մկրտութիւնը եւ անապատ տարուիլը փոխանորդական էին՝ արդեօք նոյնպէս փոխանորդակա՞ն էր իր փորձուելու տարուիլը:

Փորձութիւնները մարդկային բնութեան յատուկ են: Մարդ էակը մեղաւոր է: Փորձութիւնները սկիզբ կ'առնեն այն վիճակէն: Յիսուսի պարագան տարբեր էր: Թէեւ ան մեր բնութիւնը առաւ, սակայն մեղքը չառաւ: Ան կատարելապէս մարդ եղաւ եւ մեզի պէս ըլլալու համար՝ մարդկային բնութեան յատուկ ամէն ինչ իր վրայ առաւ, բացի մեղքէն: Իբր Աստուած՝ ան գերծ էր մեղքէ: Իր աստուածախառն մարմնով, ինչպէս կ'ըսէ շարականը, ան ենթակայ չէր մեղքին: Հետեւաբար, փորձութիւնը իրեն համար չէր: Յիսուս անապատ կը տարուէր

Ան կատարելապէս մարդ եղաւ եւ մեզի պէս ըլլալու համար՝ մարդկային բնութեան յատուկ ամէն ինչ իր վրայ առաւ, բացի մեղքէն:

մարդկային հասարակաց փորձութիւնը դիմագրաւելու եւ գայն յաղթահարելու համար: Ուրեմն, Յիսուսի անապատային փորձութիւնն ալ փոխանորդական էր, այլ խօսքով՝ մարդոց փոխարէն եւ մարդոց համար էր:

Հին Ուխտին մէջ, Աստուծոյ հին ժողովուրդը փորձութեան ենթարկուեցաւ անապատին մէջ: Յիսուսի փորձութիւնը կը խորհրդանշէ նաեւ Աստուծոյ նոր ժողովուրդին ունենալիք փորձութիւնը աշխարհ-անապատին մէջ: Հետեւաբար, Յիսուսի փորձութիւնը Եկեղեցւոյ կեանքին կը վերաբերի, որ իրմով կը սկսի եւ մինչեւ ժամանակներու վախճանը կ'երթայ:

«Քառասուն օր եւ քառասուն գիշեր ծոմապահութեամբ անցրնելէ ետք՝ անօթեցաւ»: Ինչո՞ւ է այս հաստատումը: Քառասուն օրերու ընթացքին չանօթեցա՞ւ: Ինչո՞ւ ետքը անօթեցաւ:

Այն մարդիկը որոնք ծոմ կը պահեն առաջին օրէն իսկ իրենց անօթութիւնը կը զգան: Բնագիրը մեզի չ'ըսեր, որ Յիսուս 40 օրերու ընթացքին անօթութիւն չզգաց. բայց երբ որ կ'արձանագրէ, թէ անկէ ետքը անօթեցաւ, կարծէք ըսել կ'ոզէ, որ նախորդ օրերուն անօթութիւնը զգալի չգարձուց ինքզինք, այլ յետոյ է, որ զգալի դարձուց:

Ծոմապահութեան փորձառութեան բարձունքին, այսինքն՝ իր ներքին ուժի լարման գազաթին, երբ իբր մարդ իր հոգեմտաւոր պատրաստութիւնը պիտի ունենար՝ իր տկարութիւնը զգաց: Ասիկա ընդհանուր ճշմարտութիւն մը կ'արտայայտէ: Մարդկային կեանքի մարմնաւոր, մտային եւ հոգեկան փորձառութիւններուն մէջ

հետաքրքրական է տեսնել ներքին զօրութեան եւ տկարութեան զգացումին միաժամանակ յայտնութիւնը: Յաճախ մարդոց տկարութիւնները կը յայտնուին իրենց զօրութեան բարձրակէտին:

Այստեղ զգոյշ պէտք է ըլլալ եւ անդրադառնալ, որ Յիսուսի անօթի զգալը կամաւոր էր: Բնագիրը ատիկա չ'ըսեր մեզի, բայց Եկեղեցւոյ հայրերը ատիկա շատ յստակօրէն կ'աւանդեն: Եկեղեցւոյ հայրերուն հաստատումն է, թէ Յիսուս երբ իբր Աստուած կը կամենար՝ թոյլ կու տար, որ մարմինը չզգայ. կամ թոյլ կու տար, որ մարմինը զգայ: Յիսուս իբր Աստուած կամեցած էր, որ իր մարմինը անօթութիւնը զգար:

«Այն ատեն փորձիչը՝ Սատանան մօտեցաւ իրեն եւ ըսաւ.՝ եթէ Աստուծոյ Որդի ես, ըսէ՛ որ այս քարերը հաց դառնան:

Յիսուս պատասխանեց.՝ Օրէնքի գիրքին մէջ գրուած է. Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ բոլոր այն խօսքերով, որ Աստուած խօսած է» (4.3-4):

Քրիստոս մեզի կը ներկայանայ իբր կատարեալ մարդ եւ իբր կատարեալ նմանակը առաջին մարդուն՝ Ադամի: Առաջին մարդը իր դիմաց ելած փորձութեան չդիմացաւ եւ ինկաւ: Յիսուս իբր Երկրորդ Ադամ փորձութեան դիմաց ելաւ՝ գայն յաղթահարելու համար: Առաջին մարդուն փորձութեան առջեւ տկարացումով՝ մեղքը տարածուեցաւ ամբողջ մարդկութեան վրայ, իսկ Յիսուսի կողմէ փորձութեան յաղթահարումով՝ յաւիտենական կեանքը վերաբացուեցաւ մարդկութեան առջեւ: Պօղոս առաքեալ հետեւեալ բացատրութիւնը տուած է. «Մէկ անձի մը պատճառով էր որ մեղքը աշխարհ մտաւ, եւ մեղքին պատճառով աշխարհ մտաւ մահը: Եւ այսպիսով մահը տիրեց բոլոր մարդոց. որովհետեւ բոլորն ալ մեղք գործեցին: Մեղքը աշխարհի մէջ էր, ուրեմն, դեռ Օրէնքը չկար: Եւ սակայն Ադամէն սկսեալ մինչեւ Մովսէս մահը թագաւորեց նոյնիսկ անոնց վրայ՝ որոնք Ադամի գործած անհնազանդութեան մեղքը չգործեցին: Իսկ Ադամ նախօրինակն էր անոր՝ որ պիտի գար:

Բայց նախ՝ յստակ տարբերութիւն մը կայ մեղքին եւ շնորհքին միջեւ. որովհետեւ եթէ ճշմարիտ է որ մէկուն յանցանքով բոլորը մեռան, շատ աւելի ճշմարիտ է, որ Աստուած միակ մարդու մը՝ Յիսուս Քրիստոսի շնորհիւ իր շնորհքն ու պարգեւը առատացուց բոլորին վրայ: Ապա դարձեալ տարբերութիւն կայ մէկուն մեղանչումով յառաջ եկած արդիւնքին եւ շնորհքին միջեւ. որովհետեւ մինչ մէկուն մեղանչումով աստուածային դատաստանը դատապարտութեան տակ կ'առնէր բոլորը, շնորհքը՝ հակառակ բոլորի մեղանչումին՝ կ'արդարացնէ զանոնք: Որովհետեւ, եթէ ճշմարիտ է որ միակ մարդու մը պատճառով, մէկ հոգիին յանցանքով մահը թագաւորեց, ո՛րքան աւելի ճշմարիտ է, որ Աստուծոյ առատ շնորհքն ու արդարութեան պարգեւը ստացողները պիտի թագաւորեն կեանքի մէջ, միակ անձի մը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Հետեւաբար, ինչպէս որ մէկ հոգիի յանցանքով բոլոր մարդիկ դատապարտութեան ենթակայ

Յիսուսի ելլելը փորձութեան դիմաց՝ նպատակ ունէր արդարութիւնը եւ յաւիտենական կեանքը պարգեւել բոլոր մարդոց:

եղան, այնպէս ալ մէկ հոգիին արդար գործով բոլոր մարդիկ կ'արդարանան ու կեանք կ'ունենան: Որովհետեւ, ինչպէս մէկ մարդու անհնազանդութեամբ բոլորը մեղաւոր եղան, այնպէս ալ մէկ հոգիին հնազանդութեամբ բոլորը պիտի արդարանան» (Հռ 5.12-19): Ուրեմն, Յիսուսի ելլելը փորձութեան դիմաց՝ նպատակ ունէր արդարութիւնը եւ յաւիտենական կեանքը պարգեւել բոլոր մարդոց:

Հիմա փորձենք համեմատութիւն մը ընել մարդկային փորձութիւններուն եւ Յիսուսի փորձութեան միջեւ:

Մարդկային փորձութիւններուն խտացեալ պատկերը գծուած է Ադամի եւ Եւայի փորձութեան մէջ (Մն 3.1-13), որուն հիմնական գիծերուն յարմարագոյն բանաձեւումը կրնանք տեսնել Յովհաննէս առաքեալի Ընդհանրական Առաջին Նամակի հետեւեալ համարով. «աշխարհին յատուկ բաներն են՝ մարմինի ցանկութիւնը, աչքին տեսածը ունենալու ցանկութիւնը եւ երկրաւոր ինչքերով հպարտանալը» (Ա. ՅՎ 2.16):

Յիսուսի փորձութեան մէջ Սատանան կ'ըսէ. «Եթէ Աստուծոյ Որդի ես, ըսէ՛ որ այս քարերը հաց դառնան»:

«Օրէնքի Գիրքին մէջ գրուած է. Մարդ հացով չ'ապրիր, այլ բոլոր այն խօսքերով, որ Աստուած խօսած է», կը պատասխանէ Յիսուս: Պատասխանը վերբերուած է Բ. Օր 8.3-էն: Յիսուս կը յաղթահարէ մարմնի ցանկութիւնները:

Յիսուսի պատասխանը մարմինը ճնշելու չի վերաբերիր: Ինչպէս գիտենք, Յիսուս ծոմապահութեան նպատակ ցոյց տուած է Աստուծոյ կամքին կատարումը, եւ ոչ թէ մարմնին ճնշումը (տե՛ս Մտ 6.16-18 եւ 17.20-21): Սակայն որպէսզի Աստուծոյ կամքը կատարուի՝ մարմնական ցանկութիւններէն

հրաժարիլ պէտք է, եւ տենչալ Աստուծոյ կամքին կատարումը:

Ապա աւետարանիչը շարունակած է՝

«Սատանան տարաւ Յիսուսը Ս. Քաղաքը՝ Երուսաղէմ, եւ գայն կանգնեցնելով տաճարի աշտարակներէն մէկուն վրայ, ըսաւ անոր.- Եթէ Աստուծոյ Որդի ես, դուն քեզ հսկէ

Ասիկա մտքի փորձութիւնն է, որ նաեւ Ադամ եւ Եւայի դրուագին մէջ աչքերուն հաճելի ծառին փորձութիւնն է, իսկ Յովհաննէս առաքեալի բացատրած՝ աչքի ցանկութեան փորձութիւնը: Սատանան Աստուծոյ խօսքը խեղաթիւրելով Յիսուսի միտքը կը փորձէ: Բայց ի գուր:

Յիսուսի պատասխանը դարձեալ վերբերուած է Բ. Օր Գիրքէն (6.16). «Դարձեալ Օրէնքի Գիրքին մէջ գրուած է՝ Քու Տէր Աստուածդ չ'փորձես»:

Յետոյ՝

«Սատանան կրկին առաւ տարաւ Յիսուսը շատ բարձր լեռ մը եւ անոր ցոյց տալով աշխարհի բոլոր թագաւորութիւնները եւ անոնց փառքը, ըսաւ.- Այս բոլորը քեզի՛ կու տամ, եթէ երկրպագելով պաշտես զիս:

Այն ատեն Յիսուս ըսաւ անոր.- Ետի՛ս գնա, Սատանայ, որովհետեւ Օրէնքի Գիրքին մէջ գրուած է՝ Քու Տէր Աստուածդ պէտք է պաշտես եւ միայն անոր ծառայես» (4.8-10):

Փորձութեան այս հանգրուանին Սատանան կ'ողջէ Յիսուսի մէջ հպարտութիւն արթնցնել: Ասիկա կը յիշեցնէ Ադամ եւ Եւայի դրուագին «աստուածներու պէս պիտի ըլլաք»ը, եւ կը յստականայ Յովհաննէս առաքեալի «երկրաւոր ինչքերով հպարտանալ» բացատրութեամբ:

Յիսուսի պատասխանը նախ կը ներփակէ ակնարկութիւն մը Ոսկի Հորթին կանգնումով Մովսէսի ժողովուրդին ապականելուն (Ելք 32.1-6): Ոսկի Հորթը հպարտութեան աստուածացումն էր, ուստի մերժումը փրկարար Աստուծոյ: Եւ ապա կ'արտայայտէ Յիսուսի կամքը հպարտութեան փորձութեան չ'ենթարկուելու:

Եւ Սատանան,- կ'ըսէ դրուագը,- ձգեց զինք ու հեռացաւ. եւ ահա հրեշտակները մօտեցան եւ կը ծառայէին իրեն:

Անապատային այս փորձութիւնը ունի նաեւ Յիսուսի մեսիական առաքելութեան կապուած նշանակութիւն:

Այս մասին յաջորդիւ:

(Շարունակելի 9)

Յիսուս ծոմապահութեան նպատակ ցոյց տուած է Աստուծոյ կամքին կատարումը, եւ ոչ թէ մարմնի նշումը:

վար նետէ. քանի սաղմոսներուն մէջ գրուած է՝ Աստուած իր հրեշտակներուն պիտի պատուիրէ քեզի համար, եւ քեզ իրենց ձեռքերուն վրայ պիտի վերցնեն, որպէսզի ոտքդ քարի չ'զարնուի» (4.5-6):



**Յնջորդ շաբաթուայ
Ժամանակացոյժ**

Յինգշաբթի, 17 Յուլիս 2008

11.00 > Աղօթածողով՝

Ս. ՅԱԿՈՒԲ քոյրերու ժողով

Կիրակի, 20 Յուլիս 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

Կիրակի 13 Յուլիս 2008-ի ժամը
12.00-ին, Ասթիկանի մէջ նոր
օրհնութիւն միջոցով՝ շրօքների
արարողութիւն պիտի կատարուի
էկեղեցոյս մէջ:

ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիփն:

Սոյն թերթիւն Ե-ԱՄԱՎԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ

ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՒՐԿԵՅԷՔ

eglise58@sourphagop.com-ը

Ս. ՅԱԿՈՒԲ ԲՈՅՐԵՐՈՒ ԺՈՂՈՎ

**ՊՏՈՅՏ ԴԵՊԻ
ՄԱՐԻ ՐԷՆ ՏԵԳԵՕՐ**

ԵՐԵՎԱՆԻ 22 ՅՈՒԼԻՍ 2008-ի
ԺԱՄԱՆ 8.30-16.00

ՄԵԿՆՈՒՄ ԵԿԵՂԵՑԻԷՆ ԺԱՄԱՆ 8.30-ԻՆ

Ս. ՅԱԿՈՒԲ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
29ՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆ

**ՎԵՐԱՄՈՒՄ՝
ԿԻՐԱԿԻ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008**

Մանրամասնութեանց համար դիմել
Տնօրէնին՝ Պրն Թորոս Պապիկեանին
514 956 1277 կամ
director@sourphagop.org

կայքէջ՝
www.sourphagop.org

«Մաշտոցի Արձագանգ»
www.sourphagop.org/mashdots

ԵԿԵՂԵՑՈՅՈՅ ԹԵՐԹԻՎԻ ԱՆՆՈՐԴ
ԹԻԲԵՐՆ ԿՐՆԱՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.org/weekly
ԿԱՅԷՉԻՆ ԿՐԱՅ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՒ ԱՆՆՕՐՕՔ
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԷԼՈՎ
ԵԿԵՂԵՑՈՅՈՅ ԳՐԱՏԵՆԵԱԿ

ՀԱՄԱՅՆԵՐԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ

ԲՆՅ Է

ԵՐԿՈՒԵԱԲԹԻՆ ՈՒՐԲԱԹ
ԺԱՄԱՆ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՃԵՅԷՔ ԿԱՊՈՒԷԼ ԸՆԴՏՈՒՊԱՐԻՆ՝
514 331 5445 x202
ԿԱՄ ՀՆՈՎԻՆ՝
514 331 5445 x203
ԿԱՄ ԳՐԵԼ ՀԵՏԵԻՆԱԼ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝
eglise58@sourphagop.com